Աղէքսանդրապոլում կմնայ փոխանորդական պաշտօնով մինչև օգոստոսի 20-ը և ապա կերթայ Երևան իւր նոր պաշտօնին։

Շուշւոյ դպրանոցի տեսուչ առաջիկայ տարուայ համար ևս հաստատուեց Բարձր. Տ. Բենիկ վարդ., որ մեկնեց Ապարան կազդուրուելու և պատրաստելու իւր տարեկան տեղեկագիրը։

Պետական խորհրդական Աղն. պ. Բեգլար Մարտիրոսեան Ստեփանեանց, ի յիշատակ իւր հանգուցեալ Մամիկոն որդւոյ՝ նուիրել է Մ. Աթոռի մատենադարանին 138 կտոր Գերմաներէն գրքեր, գիտական (մեծ մասամբ քիմիական) բովանդակութեամբ։ Ցանկալի էր, որ բազմանային հետևողներ այդ բարի օրինակի։

ՁԵՄԱՐԱՆ Մ. ԱԹՈՌՈՅ

Ձեմարանում քննութիւններն սկսուեցան ապրիլ 22-ին և վերջացան մայիս 31-ին։ Հրապարակական քննութիւնների ենթարկուեցան միայն դպրանոցական և մասնագիտական բաժիններն աւարտողները. այլ և Ա. և Բ. լսարանների ուսանողներն՝ այդ լսարաններում աւարտած առարկաներից։ Իսկ միւս դասարաններում դասերը շարունակուեցան մինչև մայիս 18-ը, և յաջորդ շաբաթուայ ընթացքում տեղի ունեցան դասարանական քննութիւններ։—Նախընթաց տարիների համեմատութեամբ ամենամեծ թուով ուսուցիչներ եղան այս տարի՝ 13 հոգի, որոնք, և իրենց ներկայացրած աւարտական շարադրութիւններն՝ են.

1) Ագուլեան Արամ Աղէքսանդրապոլցի—Մամիկոնեան տոհմի պատմութիւնը.
2) Այթունեան Գէորգ Ախալքալաքցի—Հայոց պատմութեան վերաբերեալ տեղեկութիւնները Մոմզէնի Հռոմ. պատմութեան մէջ.
3) Աղնաւուրեան Սենեքերիմ Ալաշկերտցի—Գիրք Թղթոց-ի բովանդակած պատմական նիւթը.

4) Բաղդասարեան Բաղդասար Կարսեցի—Հայոց Եկեղ. ժողովներն իբրև կանոնական հաստատութիւն, ըստ Դատաստանագրքի (Մխիթար Գոշի) և Կանոնագրքի.

5) Գիւլխանդանեան Յովհաննէս Վաղարշապատցի—«Գիրք Թղթոց»-ից դուրս ձեռագիրներում պահուած թղթերը.

6) Զուրիկեան Միհրան Արաբկիրցի—Մարգարէների դերը Հին Ուխտի մէջ.

7) Խոսրիկեան Միսաք Վանեցի—Ս. Էջմիածինը ժէ. դարում և վերանորոգիչ կաթուղիկոսներ.

8) Պարդանեան Լեւոն Դերբէնցի—Եպիսկոպոսի և կաթուղիկոսի իրաւասութիւնն ըստ Դատաստանագրքի և Կանոնագրքի.

9) Մելիքեան Սպիրիդոն Վաղարշապատցի (Ապարանցի)—Հայոց շարականների հնագոյն խաղերը.

10) Մելիք-Յարութիւնեան Գալուստ Երևանցի—Ս. Էջմիածնի մասին Մ. Աթոռի մատենադարանի ձեռագիրներում եղած տարերը.

11) Տէր Յարութիւնեան Աւետիս Թարգմանչի (Շուշւոյ գաւառ)—Ուսումնասիրութիւն Պ. Պռոշեանի երկասիրութեանց։

12) Տէր Յարութիւնեան Պետրոս Արթիկցի (Շիրակ)—Պրոֆեսսոր Հերմանների Der Verkehr des Christen mit Gott (Քրիստոնէի յարաբերութիւնն Աստուծոյ հետ) գրքի գաղափարների վերլուծութիւնը։

13) Փիւրդեան Նիկողայոս Աքքերմանցի—Եկեղեցական գոյքի իրաւունքն ըստ Դատաստանագրքի և Կանոնագրքի։

Միայն Աղնաւուրեան Սենեքերիմ աւարտման մրցագիր ստանալու համար մի քանի լրացուցիչ աշխատութիւններ պէտք է կատարէր, որ և կատարեց։

Ուսումնաւարաններից առաջ ուրար էին ստացել Ագուլեան, Գիւլխանդանեան և Փիւրդեան. Հոգեգալստեան տօնին ստացան նաև Բաղդասարեան, Մելիքեան, Մելիք-Յարութիւնեան և Տէր Յարութիւնեան Պետրոս։ Այդ օրը նոցա խնդրանքը հոգեհանգիստ կատարուեցաւ Ճեմարանի Բազմերախտ Հիմնադրի շիրմի վերայ և ընկերների կողմից մի զգացուած ճառով հրաժեշտ կարդաց Զուրիկեան։

Ցիշեալ՝ ինչպէս և նախընթաց տարիների, աւարտական շարադրութիւններից մի քանիսը, լինելով բարեխիղճ աշխատութեան արդիւնք և ունենալով շատ հետաքրքրական նիւթ, արժանի են տպագրութեան. ցանկալի էր որ այդպիսիները տարէցտարի լոյս տեսնէին և «Ձեմարանական հրատարակութիւններ»-ի մի շարք կազմուէր նոցանից: Ցանկալի էր մանաւանդ, որ դոցա տպագրութեան ծախքը Մ. Աթոռի տպարանի վերայ չծանրանար, այլ մի բարերար գտնուէր և մի որոշ գումար յատկացնէր այս գործի ապահովութեան համար:

«Արարատ»-ի ներկայ համարում յառաջ ենք բերում մի մի նմուշ Խոստիկեանի, Մելիք Յարութիւնեանի և Գիւլխանդանեանի շարադրութիւններից:

Բարձր. Տ. Կարապետ վարդապետի հրաժարելով, Հոգևոր ձեմարանի տեսուչ նշանակուեց Մեծ. Պ. Կարապետ Կոստանեանց, որ մի քանի օրով Մայր Աթոռս եկաւ և ստանձնեց իրեն առաջարկուած պաշտօնը՝ ներկայացնելով Նորին Վեհափառութեան ի հաստատութիւն առաջիկայ տարուայ համար իւր կազմած ուսուցչական խմբի և դասերի ցուցակը: Տ. Կարապետ վարդապետ կմնայ տեսչութեան պաշտօնում մինչև օգոստոսի վերջը:

Նորին Վեհափառութիւն բացարձակ հրամանաւ առաջիկայ Ուսումն. տարուայ համար ձեմարանում ոչ մի գիշերօթիկ ձրիավարժ աշակերտ չպէտք է ընդունուի: Ձեմարանի սանների թիւն այնչափ շատ էր վերջին տարին, որ ուսումնաւարտներին և զանազան պատճառներով հեռացրածներին հանելուց յետոյ դարձեալ 200-ի չափ կմնան. և արդէն քանի անգամ կրկնուած ու բացատրուած է, որ ներկայ պայմաններում աւելի թուով որդեգիրներ պահելու հնարաւորութիւն չկայ:

Նորին Վեհափառութիւնն, ապատ կացուցանելով մեզ ձեմարանի տեսչութեան պաշտօնից՝ բարեհաճեց պատուիրել,